

## Հիսուս Քրիստոսի հրաշափառ

### ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Եկեղեցու մեծագույն տոներից է և արտահայտումն է Աստվածորդու տնօրինական առաքելության  
և մարդու փրկագործության նախախնամ խորհրդի:

Աստծու Որդու՝ խաչի վրա մահվամբ և հարությամբ  
մարդը վերստին հավիտենական կյանք ունենալու իր  
կոչմանն արժանացավ:

Քրիստոսի հարությունը մանրամասնորեն նկարագրվում է Ավետարաններում (Մատթեոս Ի. 1-8, Մարկոս Ժ. 1-8, Ղուկաս Ի. 1-12, Հովհաննես Ի. 1-10): Համառոտ ներկայացնենք այն:

Հիսուս Քրիստոսի խաչելությունից և մահից հետո՝  
երեկոյան, բարեպաշտ մարդիկ Նրա մարմինն իջեցրին  
խաչից և դրեցին վիմափոր գերեզմանի մեջ, որի մուտքը  
փակեցին մի մեծ քարով:

Երեք օր հետո՝ կիրակի առավոտյան, յուղաբեր  
կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը և  
Սողոմեն, գնացին գերեզմանը խնկարկելու,  
բայց զարմանքով տեսան, որ քարայրի մուտքից քարը  
հեռացված է, իսկ գերեզմանը՝ թափուր: Մինչ նրանք  
տարակուսանքով ու զարմանքով այս ու այն կողմ էին  
նայում, երեւում են երկու հրեշտակ՝ լուսավոր զգեստ-  
ներով, և ասում.

«Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում:

Այստեղ չեն, այլ հարություն առավ»:

(Ղուկ. Ի. 4-9)

Հարության լուրը կանայք ավետում են առաքյալներին, որից հետո Հիսուսը երևում է նրանց: Ինչպես վկայում է Պողոս առաքյալը, Հիսուսին տեսնում է ավելի քան հինգ հարյուր հոգի:

Հիսուս Քրիստոսի հարության ավետիսը նույն հուսադրիչ և կենսատու լուրն է, որ տարածվում է մինչև այսօր աշխարհի չորս կողմերում:

Ս Ո Ւ Ր Բ ՀԱՐՈՒԹՅԱՆ  
տոնը հայերիս մեջ կոչվում է նաև  
Զ Ա Տ Ի Կ

Զատիկ նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից և իր վերջնական իմաստով՝ վերադարձ առ Աստված: Զատիկը թե՛ Հին և թե՛ Նոր Կտակարաններում համարվում է մեծագույն տոներից մեկը: Այն կապված է ազատագրության և փրկագործության պատմական զույգ իրողությունների հետ:

Առաջինը Հին Կտակարանի այն դրվագն է, երբ Հրեաները, Աստծու խնամածությամբ և Մովսեսի առաջնորդությամբ անցնելով Կարմիր ծովը, Փրկվեցին Եգիպտական գերությունից: Եգիպտական գերությունից ձերբազատվելը խորհրդանշում էր մեղքի և մահվան երկրից դուրս գալը, զատվելը և դեպի Ավետյաց երկիր ճանապարհվելը: Հին Ուխտի Զատիկը նախատիպն ու նախօրինակն էր Հիսուս Քրիստոսի ինքնակամ զոհաբերության:

«Այս բոլորը իբրև օրինակ պատահեց նրանց հետ, բայց մեզ համար որպես խրատ գրվեց» (Ա. Կորնթ. Ժ 11):

«Քրիստոսը՝ մեր Զատիկը, մորթվեց»,՝ ասում է Պողոս առաքյալը (Ա. Կորնթ. Ե 7):

Երկրորդը Քրիստոսի Հարությունն է: Աստծու Որդին՝ իբրև Գառն Աստծու, Իր արյունը թափեց աշխարհի և մեղավոր մարդկության համար, խաչվեց և երրորդ օրը Հարություն առավ մեռելներից, որպեսզի սրբելով մեղքերից՝ մեզ արժանի դարձնի Հավիտենական կյանքին:

Եգիպտոսից դուրս գալու խորհրդով Հին աշխարհը խորհրդանշաբար ազատվեց մարմնավոր գերությունից, իսկ այժմ, Քրիստոսի Հարության խորհրդով, մարդկությունը փրկվեց մեղքի և մահվան տիրակալությունից, խավարից դարձավ դեպի աստվածային լույսը, Հավատնու Հավիտենական կյանքը:

Այսպիսով՝ Հին Կտակարանի զատկական գառը օրինակն է Հիսուս Քրիստոսի:

«Ահա գառն Աստծու, որ վերցնում է աշխարհի մեղքը» (Հովհ. Ա. 29): Հովհաննես Մկրտչի այս մարդարեությունը, թե Հիսուսը պիտի քանդեր մեղքի կապանքները, կանխատեսումն էր դժոխքի ու մահվան պարտության:

Աստվածորդին մեր մեղքերի համար մեռավ և իր սուրբ արյունով սրբեց մեզ մեղքերից, որպեսզի Նրա անունով Հավիտենական կյանք ունենանք:

«Ես եմ Հարություն և կյանք. ով Հավատում է ինձ, թեպետև մեռնի, կապրի» (Հովհ. ԺԱ. 25):

Փրկչի խաչելությամբ և Հարությամբ Հաստատվում

է կյանքի ու անմահության գաղափարը:                  **Բոլոր**  
նրանք, ովքեր Քրիստոսին ընդունում են որպես իրենց  
Փրկիչ և Տեր, մի օր իրենք ևս պիտի հարություն առ-  
նեն:

«Ինչպես Աղամով բոլորը մեռնում են, նույնպես և Քրիստո-  
սով ամենքը պիտի կենդանանան»:

(Ա. Կորնթ. ԺԵ 22)

**Քրիստոսի հարությունը դարձավ քրիստոնեական**  
**հավատքի և վարդապետության հիմքը.**

«Եթե մեռելների հարություն չկա, ապա և Քրիստոսը հարու-  
թյուն չի առել: Եվ եթե Քրիստոսը հարություն չի առել, իզուր է  
մեր քարոզությունը, իզուր է և ձեր հավատը»:        (Ա. Կորնթ. ԺԵ  
13-14)

**Այսօր Քրիստոսը, հարություն առնելով մեռել-  
ներից, իր հետ հարություն տվեց նաև մեր՝ մեղքերի**  
ու մահվան մեջ ընկած ընությանը: Այսօր Քրիստոսը  
խորտակեց մահն ու խափանեց ապականությունը՝ ըստ  
Ավետարանի.

«Ո՞ւր է, մա՛հ, քո հաղթությունը, ո՞ւր է, դժո՞խք, քո խայթո-  
ցը»:                  (Ա. Կորնթ. ԺԵ 55)

**Ավանդության համաձայն՝ Մարիամ Մագդաղենացին**  
մեկնում է Հռոմ՝ Ավետարանը քարոզելու: Նա ներկա-  
յանում է Տիբերիոս կայսրին, վկայում իր քրիստոնեա-  
կան հավատը և կայսրին է նվիրում կարմիր ներկած  
մի ձու՝ ողջունելով.

«Քրիստոսը հարություն առավ մեռելներից»

Զատկի տոնին հավատացյալները ձու են ներկում։  
Չուն համարվում է հարության և նոր կյանքի  
սկզբնավորման խորհրդանիշ։ Իսկ կարմիր գույնը խոր-  
հրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը,  
որ թափվեց մեր փրկության համար։

Սուրբ Գրիգոր Տաթևացին ձուն կարմիր ներկելու  
մասին ասում է. «Միայն Զատիկին ենք ձու ներկում, որովհետեւ  
ձուն օրինակն է աշխարհի, և ինչպես իմաստուններն են ասում,  
«դրսի կեղեց նման է երկընքին, թաղանթը՝ օդի, և սպիտակուցը՝  
ջրի, դեղինն էլ երկիրն է»։ Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է,  
թե աշխարհը գնվեց Քրիստոսի արյամբ։ Եվ մենք, կարմիր ձուն  
մեր ձեռքերի մեջ առնելով, հռչակում ենք մեր փրկությունը»։

Քրիստոսը հարություն առավ մեռեներից,

իր մահվամբ մահը խորտակեց,

եվ իր հարությամբ մեզ կյանք պարզեց.

Նրան փառք հավիտյանս. ամեն։

Վիգեն սարկավագ Ղազարյան



ԴԱՅ ԱՌԱՋՔԵԼԱԿԱԾՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱԾՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ Էջմիածնի ՏՊԱՐԱՆ